

ՄԱՍԻՍ

Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

50^{րդ} ՏԱՐԻ, ԹԻԻ 34

(ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ)

25 ՕԳՈՍՏՈՍ 1901

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՕՐՈՒԱՆ ԿԵՂՆՔԷՆ. Տ. Ա. — Ի ՊԵՏՍ . . . ԱՐՏԱԴՐՈՂԱՅ. ԴՐ. ՄԱԼԽԱՍ :
— ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. — Նախասօնակը. Մ. ԱՃԷՄԵԱՆ. Այ հոգս չե. ՎԱ-
ՀԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ : — ԳԵՂԵՑԿԻՆ ՀԱՆԴԷՊ (Պատասխաններ տե՛րտե՛ր հարցու-
մին) ՓԱՏԱԾՈՒ, Ե. ԶԱՎՈՒՇԵԱՆ, Բ. Ն. ՇԱՀՊԱԶ, ՄԻՀՐ : — ՀՈՒՓՍԻՄԷ ՆԻ ՀՈՐՈՇԱՆ
(Հայ հեփեսթ՝ գեթաներէնէն քարգմանուած) ՊՕՏԸՆՇԹԷԹ : — ՅՈՒՇԱՏԵՏՐ :

Մասիս շաբաթաբերթի տարեկան բաժանորդագիրն է Կ. Պոլսոյ համար ՔԱՌՍՈՒՆ
դր. եւ գաւառներուն համար ՅՍՍՈՒՆ դր., կանխիկ վճարելի : Արտասահման՝ 12 ֆրանկ
կամ 5 բուլլի : Թղթատարական ծախքը խմբագրութեան վրայ է : Վեցամսեայ կամ Ե-
ռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր : Բաժանորդագրութիւնները կը սկսին ամեն
ամսոյ մէկէն : Մասիս հրապարակ կ'ելլէ ամեն շաբաթ առաւ, եւ կը գտնուի Բերայի բոլոր
ծխավաճառներուն ու Պահլէ-Գարուի ջրավաճառներուն խանութները, ինչպէս նաեւ Ղալա-
թիոյ, Պոլսոյ եւ բոլոր աշուարձաններու լրագրավաճառներուն հոյ :

Ձեռքէ կը ծախուի ՀԱՏԸ 40 ՓԱՐԱՅԻ

ՀԱՍՑԷ

دوعليهده غلطهده «ماسبس» غزنهسى ادارهسى

ԽՐԲԱԴՐՈՒԹԻՒՆ «ՄԱՍԻՍ» Ի

Կ. Պոլիս, Ղալաթիա, Նորասունկեան խան

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

Ա Ր Ի Ս Ե Ի Ը

ՇՈՒԿԵՇԱՐԺ ԳՈՐԾԱՏՈՒՆ

ՀՈՏԵՂԻՆԱՑ ԵՒ ՕՋԱՌԻ

Հիմնեալ 1889 ին



Վաճառանիշ

Կ. ՊՈԼԻՍ

ԹԱՀՏԱՔԱԼԷ



Արուեստագիտական վերջին կատարելագործութեամբ եւ առաջնակարգ մեքենաներով օժտեալ եւ եւրոպացի վարպետի մը հսկողութեան ներքեւ կ'արտադրէ ամենանորը հոտեղէններ ինչպէս նաեւ թուալէթի հոտաւէտ եւ լուսացի պարզ օճառներ : Տեսակի ազնուութեան մասին եւրոպական ամենամեծ գործարաններու ապրանքադէմ մրցելու տառելութեան կը միացնէ գիններու գերազանց աժանութիւնը : Փափաքողներուն՝ քաթալօկը ձրի կը զրկուի :

Մեծաքանակ գնում րնել ուղղուները կրնան ղրկել Կ. Պոլսոյ մէջ ՕՐՈՍՏԻ ՊԱՔԵԻ Կ. ԻնձիձիքնԱՆ ՈՐԴԻՔ Վաճառատունները , իսկ գաւառներու եւ օտար երկիրներու մէջ ղրկել գործակալութեանց որ ի ստորեւ . ուր պիտի գտնեն նմոյշներու ցուցադրութիւն մը՝ պէտք եղած բոլոր տեղեկութիւններով :

ԲԱՐԻՋ. — ՊՊ. Լաքառիեռ Որդի եւ Ընկ. 28 Ռիւ Շաքսոտէոն :

ՊՈՄՊԱՆ. — ՊՊ. Ապքար եւ Ընկ.

ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ. — Պ. Մ. Գալֆանան .

ԳԱՀԻՐԷ. — Պ. Հ. Ռոզաբալ .

ՌՈՒՍՃՈՒԳ. — Պ. Պ. Կ. Ինձիձեան որդիք .

ՎԱՌՆԱ. — Պ. Կեռոն Արտիքի .

ԻՋՄԻՐ. — Պ. Յակոբ Մոմճեան

ՋՄԻՌՆԻԱ. — Պ. Հայրիկս Վառնիկ .

ՍԵԼԱՆԻԿ. — Պ. Տիմո Ֆերնանտէզ .

ԻՒՍԿԻԹ. — Պ. Մ. Քափուանո .

ՊԵՐՈՒԹ. — Պ. Յրանքի Շիֆֆեր .

ՍԱՄՍՈՆ. — Պ. Պ. Պետրոսեան Եղբարք

ՏՐԱՊԻՋՈՆ. — Պ. Արիս Կ. Ինձիձեան .

ՍԵՔԱՍՏԻԱ. — Պ. Պ. Վ. Ս. Մեծատուրեան

ՌՈՏՈՒԹ. — Պ. Յակոբ Բոսփատալ

ՀԱՍՏԱՏԵԱԼ 1884ԻՆ

ՀԱՆՐԱԾԱՆՈԹ ՇԱՊԻԿԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԵՐ

ԱՐԴՈՒՋԱՐԴԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ

Թիւ 85 — Կալարա , Վոյվոսա փողոց — Թիւ 85

Խիստ խնամով ու տարապայման աժան գիներով չափու վրայ կը պատրաստուին ամէն տեսակ չապիկ , օձիք , թեւնոց , գիշերազգեստ ու ներքին ճերմակեղէններ :

Միայն Ֆրանսական ու Անգլիական ընտիր տեսակ կերպամաներու զանազանութեամբ օժտուած սոյն գործարանը տրամադիր է ընդունիլ ու կատարեալ հոգածութեամբ պատրաստել հարսանեաց ճերմակեղէններու յանձնարարութիւններ :

Կը ծախուին վերջին նորաձեւութեամբ խիստ ճաշակաւոր ու միշտ աժան գիներով օձիք , թեւնոց , ֆլանէլ , գոյպոյ , թաշկինակ , ոսկեզօծ կոճակներ , փողկապ , դրամապնակ , զմեյի «Չէֆիտ» , խոզանակ , սաւար ու անուշահոտութեանց լաւագոյն տեսակներ :

Մ. ՏԵՐ-ԴԱԻԻԹԵԱՆ վաճառատունը նորաձեւութեան , ապրանքայ ազնուութեան , յանձնարարութեանց խնամով պատրաստութեան , ու գիններու աժանութեան տեսակէտով վստահելի ու լաւ յանձնարարելի լաւագոյն տուններէն մէկն է :

ԳԻՆՆԵՐԸ ՈՐՈՇԵԱԼ ԵՆ


ՄԱՍԻՆ

50րդ ՏԱՐԻ

— 25 ՕԳՈՍՏՈՍ 1901 —

ԹԻԻ 34

ՕՐՈՒԱՆ ԿԵԱՆՔԸ



«ԳԵՂԵՑԿԻՆ ԷԱՆԳԷՊ» . — ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՏԵԵԼՈՍԻՆ ՏԱԿ . — ԲՐԵՆՔԻԹՈ ԵՒ ԳԱՐԱԿԷՍՄԻԻԿ . — ԱՇՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԵՒ ՍԱՄՍՈՆՅՈՒՆԵՐԸ . — ԶՈՒԳԱԳԻՊՈՒԹԻՒՆՆԵՐ . — ԲԱՐԻ ՎԿԱՑՈՒԹԻՒՆ ՄԸ :

Ուրախալի պարագայ մըն է որ գէթ Գրուկան Հանդէսներու մասին չգործադրուիր լրագրական այն ազիզ սովորութիւնը որուն գէժ գրից ու չաբաթը չանցած . . . ինքն իսկ մեղանչեց Բարգէն Վարդապետ , — թէ եւ առանց իր ուզելուն : Գուշակեցիք թէ վիրար շատուան թերթ մը» — «պաշտօնակից մը» — «երէկուան թերթ մը» կոչելուն , զիրար անտեսելուն կ'անկարկեմ ուսկից վերծ են Պարբերականները , գէթ իրենք իրենց մէջ ու քանի մը օրաթերթերու համար : Այսպէս , «Գեղեցկին հանդէպ» հարցումին , զոր հրապարակ նետեց Մաւիս , առաջին պատասխանը հրատարակեց Սուրհանդակ , եւ Արեւ Մանուկի Օգոստ 15ի թիւն ալ կը պարտնակէ պատասխան մը նոյն հարցումին : Պ. Ղուկաս Վարդապետանի կողմէ որուն քանի մը առիթը կ'արժէ արտատպել :

«Սիրուն է հարցումը եւ պարզ՝ ըստ երեւոյթին , թէ եւ քիչ մը կ'նճոտա՞ երբ մարդ «մտածել ուզէ : Պիտի ներէք անշուշտ եթէ «հոգեբանական խոր ուսումնասիրութիւն մը չընելու գործը թողում կ'արող գրիչներու ու «րանք չեմ կ'արծեմ աւելորդ բան մը ըրած «ըլլան եթէ հաճին պահ մը թօթափել զրա «կան հարցերու յախանապէս փարելու իղ «ձերնին» ու զրադին քիչ մ'ալ ընկերային «խնդիրներով որոնք աւելի օգտակար ըլլալու սահմանուած են ժողովուրդին ապահով «վարար» :

Պ. Ղ. Վարդապետան մատր վէրքին վրայ կը դնէ , ինչպէս կ'ընեն : Առանց սանձաթիւն մը ընել ուզելու Մէրսէտէսի վերապահուած սահմանին մէջ , պիտի աւելցնեմ միայն թէ Մաւիսի համակրելի աշխատակցին — որուն քով զրական հարցերու միջերը չէ որ կը պակսի — այս տեսակ հարցում մը մէջտեղ դնելուն բուն նպատակը՝ քիչ մըն ալ ընկերային խնդիրներու ուսումնասիրութեան դուռ բանալ էր անշուշտ . թէ ո՛ր աստիճան գոհացում պիտի գտնէ իր անկախութեանը մէջ , իրեն կը մնայ ըսել , երբ զրազէտներու ու ոչ-զրազէտներու պատասխաններուն չարք աւարտի , եւ Պոլսեցի ու գաւառացի սպառն իրենց ըսելիքը : Ապաւելով այդ եզրակացութեան , դիտել պիտի տամ խոնարհարար , թէ ուրիշ տեսակետով մըն ալ ազէկ կ'ընենք՝ փոխանակ զրականի՝ ընկերային հարցերով զրազելով , վասն զի «Գրական» վերնագիրը կամ տիպոգրօն ո՛չ մէկ ժամանակ այնքան խաթարուած , ապաւաղուած , իր ճշմարիտ նշանակութենէն հեռացուած էր հայ լրագրութեան մէջ որքան վերջին ժամանակներս : Ամէն յօդուածագիր , ամէն թղթակից , ամէն հաւաքածոյ ընող կամ թարգմանող յաջողութեան ճամբան գտած ըլլալ կը կարծէ «Գրական»ը կոչուներով իր յօդուածին զլիտուն , — ճիշդ ինչպէս որ կ'ըլլայ խորհրդարան թանեաքներու համար որոնք փայլուն պիտակներ կը կրեն : Իրաւ է

որ, ինչպէս ժողովուրդը դիւրաւ կը զանա-
զանէ ըմպելիքին կեղծը՝ հարազատէն, ըն-
թերցող հասարակութիւնն ալ անհամ գըր-
ուածք մը չի մարտեր՝ համով վերնագիր մը
կրելուն պատճառաւ, բայց հետեւանք այն
կ'ըլլայ այս խառնաշփոթութիւններուն որ
Պրականութիւն աղուոր անունը իր հմայքը
կը կորսնցնէ տակաւ տակաւ։ Անիկայ կը
դադրի քիչերուն մերձենալի չքեղ դիցունհին
ըլլալէ, ու կը դառնայ հասարակաց կինը,
բաւական է որ իր ուսերուն վրայ կրէ անոր
վերարկուն նմանող բան մը։

Խնդիրը, զոր յարուցանել կ'ուզեմ այս
առթիւ, մէկ Հանդէսի կամ մէկ Օրաթերթի
չի պատկանիր։ ամբողջ հայ մամուլին ար-
ժանապատուութիւնը, — եթէ ոչ բարոյա-
կան շահը, — կը պահանջէ ուշագիր եւ
բծախնդիր ըլլալ։ Եւ իբր Պրական չի հրա-
տարակել գրուածքներ որոնց մէջէն դպրո-
ցական տղայ մը իսկ քերականական սխալ-
ներ պիտի գտնէր, առանց հաշուելու իմաս-
տի ու գաղափարի ուսուցիչութիւնը։ Եւ
զարմանալին հոն է որ Պրականութեան մե-
տաքսեայ հրապուրիչ դիմակին տակ տպաս-
տանիլ ուզողներուն թիւը որչափ կը շատնայ
նոյնքան կը շատնան կարծես, միւս կողմէ,
Պրականութեան դէմ գոռում-գոչումները։

Անցեալները, բարեկամներէս մէկը, — որ
գրասէր ընթերցող մը ըլլալէն անդին յաւակ-
նոտութիւն չունի՝ ինչպէս այս տողերը գրողը
մամուլի աշխատաւոր մը ըլլալէն աւելին
չէ ըզձացած բնաւ, (Մանգրումի մէջ Թէո-
դիկի տուած սահմանէն ալ պակաս) — այս
նիւթին վրայ խօսելով, կը հարցնէր թէ ի՞նչ
մեկնութիւն տալու է սա հակառական երե-
ւոյթին։ — միեւնոյն թերթը որ երէկ կը քա-
րողէր թէ գրականութեամբ զբաղեցնելու չէ
ընթերցողները, նոր սերունդը եւայլն, յա-
ջորդ օրը գրական տիրապետներու առատու-
թեամբ կը հերքէ իր նախորդ ըսածը։

Պատասխան չգտայ տալու։ Բայց եթէ
մէկը անոնցմէ որոնք փոքր թիւ մը չեն կազ-
մեր եւ որոնց խոհալն է միշտ շարաթական կամ
կիսամասեայ Հանդէս մը հրատարակել, հարցնէր
ինծի թէ յաջողութեան պայմանը ի՞նչ բանի
մէջ կը գտնեմ, պիտի պատասխանէի առանց
վարանելու։

— Հրատարակելիք թերթիդ անունն ան-
միջապէս քովիլը աւելցուր, խոշոր տառե-
րով, ՈԶ-ԳՐԱԿԱՆ։ Բացառութեան մը, նու-
րութեան մը հրապուրը կ'ունենայ գէթ։

Ձէ՛ մի որ նոյն երեւոյթը պատահեցաւ ու
կը պատահի Նորավէպին շուրջը, — ո՛չ թէ
բառին կազմութեան՝ այլ բո՛ւն իսկ Նորա-
վէպին շուրջը։ Այս տարւոյն մէջ ալ, ինչ-
պէս ամէն տարի պարբերաբար, շրջան մը
ունեցանք — բարեբաղդապէս կարճատեւ —
ուր առտուն արթնցողը քար մը ունէր ար-
ձակելիք Նորավէպին դէմ, միեւնոյն ժամա-
նակ ըզձալով, եթէ լրագրապետ է կամ թեր-
թի մը խմբագիր, նորավէպներ ունենալու եւ
հրատարակելու։ Եւ որովհետեւ, մեր գրա-
կան սահմանափակ արտագրութեանց մէջ,
ամէնէն դժուարին բաներէն մէկն է զուտ
գրական, համով-հոտով նորավէպ մը ունե-
նալ, մեր կեանքէն, Նորավէպի հաւածիչ-
ները կը շատանային Հնավէպներ դնել, եւ
կամ վէպեր որոնք իրենց երկարութեամբ
կամ թարգմանուած ըլլալովն միայն կը
տարբերին Նորավէպէն։ Եւ միամիտ ընթեր-
ցողը, օրաթերթի մը միեւնոյն էջին վերի մաս-
ին մէջ բուռն յարձակողական մը կարգալէ
ետքը Նորավէպին դէմ, կ'իջնէ ստորտուր,
Թերթօնի բաժնին, ուր կը շարունակէ կար-
գալ իր առօրեայ վիպասանութիւնը որուն
մէջ տարփանք, աւտիանք, սիրային առե-
ւանգութիւն, ցոփ կեանքերու նկարագրու-
թիւն, լիառատ կը մատուցուին իրեն։ Բայց
չի գայթակղիր, որովհետեւ... պատմուա-
ծին վերնագիրը «Նորավէպ» չէ։

* * *

Գեղանի Նորավէպին դէմ բամբասանքնե-
րու նոր տարափի մը առիթ չի տալու համար,
կանցնելով եկեղեցական խնդրի մը, Արեւի
նորագոյն մէկ առաջարկին, — որ է մատու-
ոի մը շինութեան պէտքը Բրինքիւրդի մէջ
ուր հայ տարրը այնքան ստուար եւ պերճ է
ամբան եղանակին։ Իմ մասին, չա՛տ բանա-
ւոր գտնելով հանդերձ առաջարկը, կը կար-
ծեմ թէ առաջնութեան իրաւունքը Պարտ-
կէօմբուլի աղքատիկ թաղին այրած եկեղե-
ցիին կը պատկանի որուն վերաշինութեանը
համար խնդրագիր տուին վերջերս քսանի

չափ կրներ՝ Ս. Պատրիարքին : Այդ շէնքով պզտիկ՝ բայց կրօնային նշանակութեամբ մեծ ուխտատեղին, տարին չանցած մոռցուեցաւ գրեթէ, — ինչպէս կը մոռցուին աւելի կաթեւորներն իսկ կեանքի մէջ, — եւ հարկ եղաւ որ խումբ մը բարեպաշտիկ խաթուններ, որոնց սիրելի աղօթարանն էր, իրենց տղայ հասակէն, Ս. Յովհան Ոսկերեանը, զան յիշեցնել մեզ զայն : Մինչդեռ, հրդեհէն ետքը, երբ ծանուցուեցաւ թէ ապահովագրական ընկերութիւնը ամիսով մը վճարած է իր ապահովագրած գումարը, աւելի բան մըն ալ նուիրելով, եւ Մասունքները Պաշտօնի եկեղեցին փոխադրուեցան առժամապէս, կը կարծէինք որ իսկայն պիտի ձեռնարկուի եկեղեցիին վերաշինութեան : Անշուշտ գրամը անխափա պահուած է ինքնամակալութեան Սնտուկին մէջ, եւ Ս. Պատրիարք Հայրն ալ խոստացած ըլլալով խնդրարկու կրներուն թէ նկատողութեան պիտի առնուի իրենց դիմումը, յուսահատելու պատճառ մը չունինք :

Իսկ թէ Բրինքիքօ օղափոխութեան գաղտնի բարեկեցիկ հայ ընտանիքները բարեպաշտական եռանդը այնքան առաջ կրնա՞ն տանիլ, որ Գարակէօսիւսէն առաջ իրենք կառուցանել տան մատուռ մը, — Բարիդի մէջ հայ եկեղեցիի մը կառուցման համար 100,000 աւոր ըտպլիներ ծախսուելու օրինակէն ներշնչուելով, — առիկայ անսպասելի բարեբաղդութիւն մը պիտի ըլլայ որուն գաղափարին նախաձեռնութեան պատիւը պիտի պատկանի Արեւելիի յարգելի աշխատակցին՝ Արէտի : Մեր բարեկամը, իր վերջին «Շաբաթական Նօթեր»ու առաջին մասը ամիսով մը նուիրած է Յակոբ Աշոտ եպիսկոպոսին. եւ կ'արժէր Օրթոդոքսի երեսմիլիոն բողոքը եւ Եգիպտոսի նախարար տեղապահը որ աւելի քննադատողներ ունեցած է քան թէ գնահատողներ, զժրագր եկեղեցական միեղած է հովուական պաշտօններու մասին, ընտրուելով այն Վիճակներէն ուր չի փոխադիր երթալ, եւ չընտրուելով այն Վիճակներէն որոնց մէջ կամա՞նք մօտ կը գտնուի Այսպէս, Եգիպտոսիները Գահիրէի մէջ ունենալով զինքը, իրենց քուէները միացուցին Ռո-

տոմիոյի առաջնորդին վրայ, եւ հազիւ Աշոտ եպիսկոպոս Իգմիրի կլիմային ու մարդերուն վարժուած, անպաշտօն կերպով դեր-առաջնորդութիւն մը կը վարէր, եւ ահա՛ Պաշտօնացիները ուզեցին զինքը : Աշոտ եպիսկոպոս շատ չմեղադրուեցաւ Իգմիրը Պաշտօնէն նախաձեռնար սեպելուն համար. իր տեղը որ եւ է եկեղեցական նոյն տրամադրութիւնը պիտի ունենար :

Այս անգամ, լուրը Սամսոնէն հեռու ալ ըսելիք չի մնար Աշոտ եպիսկոպոսին, քանի որ առաջնորդ ընտրուած է Գաւառական Ժողովին միաձայն քուէովը : Սամսոն ու շրջանակները կրնան ապրեցնել զինքը եւ ինքն ալ չա՛նք լաւ կրնայ հովուել զանոնք. ներդաշնակ ընտրութիւն մըն է կատարուածը : Աշոտ եպիսկոպոսը գրագէտ չէ, գիտենք ամէնքս, ո՛չ ալ ճարպիկ եկեղեցական. իր անձին առաւելութիւնը կը կայանայ, ընդհակառակը, չափազանց պարզ ու անկեղծ ըլլալուն մէջ. քիչ մը հնարամտութեամբ ու հեռատեսութեամբ՝ պիտի կրնար շահիլ Եգիպտոսի առաջնորդութիւնը որուն աթոռին ալ վարժուած էր քիչ շատ : Աշոտ եպիսկոպոս, որչափ որ խմացած ենք, իր եկեղեցականի կեանքին մէջ անգամ մը միայն փորձեց պզտիկ հնարամտութիւն մը, — մէկը այն անմեղ ճարտարութիւններէն զորո տարբեր պարագաներու մէջ ուրիշ եկեղեցականներ լիառատ կը գործածեն, — այն է եպիսկոպոսական ձեռնադրութիւն ստանալու հարքը, ինչ որ սուղի նստաւ իրեն : Ապահովապէս, միտքը գրած է իրեն բնական եղալ ընթացքէն չլեզվալ այլեւ, եւ թերեւս Սամսոնցիներն ալ ընտրեցին զինքը՝ իր պարզութեանը ու անկեղծութեանը համար : Այս նկատումը, եթէ իրօք գոյութիւն ունեցու, պատուարեր է երկու կողմին համար ալ, լիարեւելին եւ ընտրողներուն հաւասարապէս :

* * *

Պէրպէրեան վարժարանի հաստատման 25ամեայ յորելանի օրուան մօտ, գաւառային հեռաւոր քաղաքէ մը սրտառուջ արձագանգ մը կը հասնի, թէ կրթական մասնաւոր

հաստատութիւն մը, իր Զէրդ տարւումն մէջ, դուռները փակելու վիճակին հասած է, իր ելեւմուտքին անհաստատութեան պատճառով:

Գուշակեցիք թէ Վանայ Երամեան վարժարանին կ'ահնարկեմ որուն վրայ գրեցին արդէն Բիւզանդիոն եւ Սուրհանդակ, ջերմագին հրաւերներ ուղղելով կրթասէր հարուստներու, որպէս զի համեստ նպատակ մը զրկուի այդ արդիւնաւոր հաստատութեան:

Զուգադիպութիւն մըն է արդարեւ, եւ աչքի զարնող զուգադիպութիւն մը, որ երբ այստեղ կը պատրաստուինք տօնելու Պէրպէրեան վարժարանին քսանըջինգամեակը, անդին՝ Երամեանը իր քսանըջինգամեակը չի թեւակոխելու երկիւղին մէջ կը գտնուի: Անշուշտ կարելի չէ ըսել թէ այդ գաւառային դպրոցը կրնայ միեւնոյն մակարդակին հասած ըլլալ մայրաքաղաքի կրթական հաստատութեան մը բազմապատկառ, բայց իր միջավայրին համար՝ պէտք եղածէն աւելին կը հայթայթէ, եւ յետոյ, սրտառուչ պարագայ մըն է որ անոր Հիմնադիր-Տնօրէնը զրկուած է իր աչքերուն լոյսէն, եւ այդ դժբաղդ վիճակին մէջ՝ առանց կորսնցնելու իր հոգեկան ու մարմնական կորովը, կը դառնախօսէ, դրօշմը կը վարէ, մատակարարութիւնը կը հոգայ, կ'երթեւեկէ, կ'աշխատի անընդհատ:

Իր սրտառուչ կոչին առթիւ, որուն ինքնաբերարար ուժ տալ տալն հրապարակագրի պարտքն է, հետաքրքրուեցայ ճշգրիտ գաղափար մը կազմել իր անձին ու դպրոցին վրայ, եւ բարիգաղութեան այցելութեան մը պահուն՝ խնդրեցի իմանալ կարծիքն ու տպաւորութիւնը Տ. Եղիշէ վարդապետ Զիլինկիրեանի որ դեռ երկու ամիս առաջ Վան այցելած էր:

— Օհ, ըսաւ Բաղէշի հոգեշնորհ առաջնորդը, խանդավառ ու անկեղծ շեշտով մը, Երամեանը հազուադիւս անձ մըն է եւ իր վարժարանը ամէն տեսակէտով յանձնարարելի: Տեսայ զինքը եւ ներկայ գտնուեցայ վարժարանին տարեկան քննութեան զոր իրենց ներկայութեամբը պատուած էին Վսեմ, Կոռակալը, զինուորական հրամանատարը եւ ուրիշ բարձրաստիճան պաշտօնական անձինք:

Ամէնքն ալ գոհ մնացին տղոց յաջողակ պատասխաններէն որոնք ցոյց կուտային իրենց ստացած ուսման եւ կրթութեան լուրջ ու գործնական հանգամանքը:

Եւ նոյն խանդավառ շեշտով նկարագրեց թէ ինչպէս, այդ յիսուն տարեկանի մօտ կոյր մարդը 200 տղաք կը դաստիարակէ ուսուցիչներու լաւագոյն խումբով մը, բոլորաձայն անձնութիւններով: Թէ յոգնիլ ճանձրանալ չէ գիտցած Զէ տարիէ ի վեր, ու նոյնչափ աշխոյժ է իր դպրոցական յարկին տակ, պաշտօնին զուելը, որքան անկէ դուրս՝ ամէն անգամ որ այցելութիւն մը, երթեւեկութիւն մը կատարելու պէտք ունենայ, եւ ընտանեացի մը պէս թեթեւօտն՝ մէկ-երկու ժամուան ճամբայ կ'երթայ հետիոտն, կը բաւէ որ իր նպատակակէտն ըլլայ՝ դպրոցին համար որ եւ է օգտակար բան:

Եւ Գեր. խօսակցից, աւելցուց՝ ինքնավստահ ու համոզուած:

— Այդ մասնաւոր վարժարանը կրնայ յաջողապէս մրցիլ գաւառային ո՛ր եւ է առաջնակարգ դպրոցի հետ: Եթէ Բաղէշի մէջ առանկ հաստատութիւն մը ունենայինք, իմ առաջնորդութեանս օրով, ես ինքս պարտք կը սեպէի ինձի՝ մուրաշ եւ ունեւոր ազգայիններէն հաւաքել բաւականաչափ զուարթ մը որպէս զի չը փակուի այն:

Այս սրտառուչ ու բարի վկայութեան վերայ՝ բառ չեմ գտնելու աւելցնելու իմ կողմէս:

Տ. Ա.

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹԻՒՆ. — Դոհութեամբ կը ծանուցանենք թէ Տպագրական Տեսչութեան երկրորդ օգնական անուանուած է առաջին միւսմէիզ եւ տպարաններու ընդհանուր քննիչ Քեամիլ պէյ, որ տպագրական ու հրատարակչական գործերու մէջ ունեցած հմտութեամբը ու արժանիքովը, ինչպէս նաեւ իր ազնիւ բնաւորութեամբը եւ ուղղամիտ վարմունքովը ընդհանուր համորում ու համակրանք կը վայելէ: Կը շնորհաւորենք Քեամիլ պէյը իր պաշտօնի բարձրացմանը առթիւ:

Ն Ա Ք Ա Տ Օ Ն Ա Վ Ը

Փոքորիկն անցաւ . կայծակին անեղ
Գոռ եւ որոտումն , անձրեւ ու հեղեղ
Դադրեցան ալլեւ , ու նորէն փայլի
Կապոյսն երկնքին պայծառ աւելի .
Բնութիւն համայն կազդուրած պրննի՝
Նոր երանգներով կարծես վերծրնի
Տօնելու համար հանդեսը չֆնաղ
Վերափոխումին . ու գեղածիծաղ
Լեռներ որ հագնին մօուէկ շուրջառ ,
Հովիկ որ շարժէ ծառերուն բուրվառ ,
Իրիկնամուտին այն վեհ տեսարան
Որ վարդակամար յօրինէ խորան ,
Տիրամօր կուսին օրհնեն յիշատակ ,
Ու գովաբանեն փառքն ու յաղթանակ .
Լուսնակն ալ անա կուգայ՝ ամայի
Դաւեսերուն վրայ տեսնում կը նայի ,
Ու ծոցէն անուշ ցօղեր կը ցանկ
Ձի մեռելոցին նախասօնակն է .
Եւ մեքով մոլար քափառիկ կ'երբամ
Հոն ուր քաղուած են աղֆան ու փարբամ .
Հոն ուր շարուած են հողակոյսեր ցած
Եւ դամբարաններ շէղ բարձրացած ,
Հոն ուր բով բովի կը ննջեն հանդարտ
Մրցակիցք անհաւատ , ոսոխներ հպարտ ,
Եւ ուր հաւասար ծածկէ նոյն այն հող՝
Դանկը սնամիտ ու գլուխը խորհող .
Ու երանի տալ անոնց որ հանգչին
Խաղաղ շուքին տակ պարզ փայտէ խաչին :

Մ. ԱՃԷՄԵԱՆ

ԳԵՐՄԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ՄԸ , Ֆրիէտրիխ Պօլընշթէթի մէկ հատորէն թարգմանա-
բար քաղուած աւանդավէպ մը կը հրատարակենք յաջորդ էջին մէջ , Հռիփախն եւ Հօրօ-
շան , զոր մեզ զրկած է մեր աշխատակից Պ. Վահան Գոյումճեան , Կարինէն : Թարգ-
մանիչը սա հեառքրքրաշարժ ծանօթութիւնը կուտայ թէ Պօլընշթէթ՝ իր Կովկասի մէջ
կատարած մէկ ուղեւորութեան միջոցին՝ Հայերու բերնէ լսած ու իսկոյն գրի առած է
զայն : Բանաստեղծը այդ հէքեաթին տուած է գինքը յատկանշող թեթեւ , զուարթ ու
կտրուկ ոճը , եւ իր բանաստեղծի երեւակայութեան դրոշմը : Պօլընշթէթ գերման ժամա-
նակակից բանաստեղծ մըն է որ վերջերս մեռաւ :

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ պիտի հրատարակենք Ալիսալանի ոտանաւոր մէկ պատասխանը՝
Դեղեցիկն հանդէպ հարցումին :

ՀՌԻՓՍԻՄԷ ԵՒ ՀՈՐՈՇԱՆ

(Հ Է Ք Ե Ա Թ)

Ժամանակաւ փարթաւ ծերունի մը կար որ ունէր երիտասարդ կին մը՝ հրաշալի գեղեցկութեամբ :

Ան իր ամուսնին իրեւ օժիւս բերած էր տասներկու խոշոր կաշիէ սնուակներ՝ լեցուն ամէնէն թանկագին զգեստներով եւ իրեղէններով :

Ու Տիկինը ունէր քեռաղջիկ մը՝ որ իրմէ աւելի մատաղատի էր , ու անհամեմատ գեղեցիկ , այնպէս որ ինքը կը նախանձէր անոր :

Քեռաղջիկը կը կոչուէր Հորոշան , եւ Տիկինը՝ Հռիփսիմէ : Հորոշան իրենց բնակած ապարանքին բանալիները պահելու պաշտօն ունէր : Իրեն յանձնուած էին նաեւ կաշիէ սրնուակներուն բանալիներէն տասներմէկը , բայց տասներկուերորդ բանալին , ամէնէն մեծը , Տիկինը ինք կը պահէր ու կը ծածկէր զայն մարդոց աչքերէն :

Հորոշան բռնուեցաւ բռն թաղճանքէ մը , գիտնալու համար թէ Հռիփսիմէ ի՞նչ բան ծածկած կը պահէ տասներկուերորդ սնուակին մէջ , որովհետեւ մնացեալ բոլոր սնուակները դրուած էին ապարանքին սենեակներուն մէջ ամէն կողմ , մինչդեռ տասներկուերորդ սրնուակը կը գտնուէր ծածկուած խցիկի մը մէջ , ու պահապաններ կարգուած էին եւ ո՛չ ոք կը համարձակէր հոն երթալ՝ առանց պատժուելու վտանգին , երբ Տիկինը ներսն էր , ապահովարար օրուան մէջ երեք անգամ :

Եւ պատահեցաւ օր մը՝ ուր Տիկինը իր աղախիններուն հետ ըզգանքի մէջ էր՝ պաղտաբերութեան զիցուհիին նուիրական ծաղկահանդէսին առթիւ իր մարմինը օծել եւ զարդարել տալու համար . Հորոշան չկըրցաւ զիմադրել իր թաղճանքին՝ անոր սենեակները հետազոտելու , տասներկուերորդ բանալին գտնելու եւ տեսնելու թէ ի՞նչ պահուած էր խորհրդաւոր սնուակին մէջ : Երկար պրպտումէ մը ետքը յաջողեցաւ գտնել մեծ բանալին : Հռիփսիմէի ամուսնոյն ննջատենեակին մէջ գտաւ զայն , այնպէս ծածկուած

որ ծերունին անգամ տեղեակ չէր այդ բանին :

Հորոշան փութաց բանալիովը սնուակը բանալու եւ ի՛նչ մեծ եղաւ իր սարսափը , երբ յանկարծ անկէ դուրս եղաւ սիրուն թխադէմ երիտասարդ մը . սականջները կը կրէր ոսկիէ զինդեր ու մազերը գուռզ էին , իր հօրը ոչխարի հօտերուն բուրդին պէս . ու անոր առաջները սպիտակ էին , մարմինը կը բուրէր նարդաւ ու անուշահոտ իւղեր :

Հորոշան ուզեց փախչիլ , բայց երիտասարդը իր զօրեղ բազուկներով պինդ բռնեց զայն . աղջիկը ուզեց պտտալ — բայց վախցաւ որ տանուտէրը կը ըլլէ իր ձայնը : Ու անխօսուկ մնաց այնտեղ :

Երիտասարդը բռն սիրով մը վառուեցաւ անոր համար , որովհետեւ անչափելի գեղեցիկ էր . ու անոր դէմքը գիտե՛լ խիստ հաճելի : Հռիփսիմէն աւելի մատաղատի էր Հորոշան :

Այդ միջոցին պատահեցաւ որ աղախիններուն մէկ վրիպումովը Տիկինը ներքնազգեստները (Schalwari, Beinkleider) ջուրը ինկան , ու Հռիփսիմէ բարկութեամբ կը բորբոքէր եւ կը զրկէր անոնցմէ երկուքը՝ զոյգ մը չգործածուած ներքնազգեստ բերելու :

Ու աղջիկները ապարանքին սենեակներուն մէջ ամէն տեղ փնտռեցին , գտնելու համար Հորոշանի՝ բանալիներուն պահողը , որովհետեւ Տիկինին զգեստները կը գտնուէին կաշիէ սրնուակներուն մէջ , սակայն Հորոշան երիտասարդին հետ գաղտնի սենեակին մէջն էր : Փնտռեցին ու չգտան զայն :

Հռիփսիմէ բռնեցաւ անհամբերութեան պատճառած բարկութեամբ ու սկսաւ դռն խօսքերով անարգել բացակայ աղախինները եւ զրկեց երկու ուրիշներ՝ առաջինները փռնուելու եւ զանոնք իր ներկայութեանը առաջնորդելու :

Բայց Հորոշան ո՛չ մէկ տեղ գտնուեցաւ , թէպէտեւ զայն փնտռելու համար վերջի վերջոյ բոլոր աղախիններն ալ զրկուած էին :

Այն ժամանակ աղիտարեր կտակածը սպրդեցաւ Տիկինը մտքին մէջ ու ան ինքնիրեն հազաւ իր զգեստները եւ առանց ներքնազգեստի շտապեց իր ամուսինին ննջատեն-

եակը՝ տասներկուերորդ բանալին փնտռելու համար, — բայց այնտեղ չգտաւ զայն :

Ու զայրոյթը գունաւորեց անոր այտերը մութ կարմրութեամբ մը, ու վազեց գաղտնի սենեակը՝ ուր կը գտնուէր մեծ սնտուկը . . . ճիշդ այն միջոցին երբ Հորոշան զբաղած էր մեծ բանալիով սնտուկը խնամով վերստին գուցելու :

Հորոշան վարհուրեցաւ, բայց շուտով ինքզինքը ամփոփեց եւ կռտական արդար ցատկոտ ակնարկով մը խորտարար դիմաւորեց իր բարկաճայթ մօրաքորը, ձեռքերը կողբալուն դրաւ եւ դառնութեամբ լեցուն խօսքեր հեղեղանման թափեցան անոր անոյշ բերնէն :

— «Ա՛յս է եղեր իմ ազնուատոհմ մօրաքորջա առաքինութեան բարձրութիւնը : Վա՛յ տարարախտիս որ ստիպուեցայ ապաւէն փրնտուել այս տան մէջ՝ ուր պարկեշտութիւնը ոտքի տակ՝ առնուած է եւ ուր սրբութեան ձիւնը կը մթազնի՝ պահուած թխամորթի մը կերպարանքէն : Երկրին ամենէն գեղանի կոյսերը տենչացին քու ամուսնոյդ սիրոյն, բայց անոնց ակնարկները չչարժեցին զինքը, ու պաղութեամբ երես դարձուց իր սիրոյն փոխարէն այսպիսի՝ վարձատրութիւն ստանալու համար : Ո՛հ, պէ՞տք էր որ երկար ապրէի՝ տեսնելու համար այս տան սրբութիւնը պղծուած իմ մօրաքորջիմէս զոր մինչեւ հիմա կը յարգէի ես, իրրեւ մարմնացած Առաքինութիւնը : »

Ան մէկ անգամէն այսպէս դուրս տուաւ իր բողբոքը, այնպէս որ Տիկինը չկրցաւ խօսք մը ըսել : Վախնալով էրկանը վրէժխնդրութենէն, այն պարագային՝ երբ իր անհաւատարմութեան մասին անոր տեղեկութիւն տրուէր, Հոսիփիմէ ամէն ճիգ ի գործ դրաւ իր քեռաղջիկը լռութեան բերելու, միեւնոյն ժամանակ գաղտնարար պատրաստուելով Հորոշանը հեռացնել :

Հորոշան՝ վրիժառութեան նպատակաւ՝ ծերունիին տեղեկութիւն տալէ ետքը իր կնոջ անհաւատարմութեան մասին, փախաւ գնաց հեռաւոր լեռնային անտառ մը :

Ծերունին՝ իր մանկամարդ կնոջ համար գերագոյն սիրով մը ոգեւորուած՝ նախամեծար կը համարէր չհաւատալ անոր անհաւա-

տարիմ ըլլալուն, մինչեւ որ իր սեպհական աչքերով համագրեցաւ այդ բանին : Օր մը յանկարծակիի բերաւ զայն ծածուկ սենեակին մէջ, երբ Հոսիփիմէ հազիւ թէ իր բազուկները գալարած էր երիտասարդին պարանոցին ու փափկութեամբ կը մրմնջէր. «Ո՛ւր էր թէ քու գլուխդ երբեք չլաժնուէր իմ գլուխէս : »

«Քու բաղձանքդ թո՛ղ կատարուի, սիրաշարժ կ'իմ, — պուաց ծերունին վրէժխնդրութեամբ բացալաւ, — սիրահարիդ գլուխը երբեք չպիտի բաժնուին քուկինէդ : » Ու անոր գանկը ոսկիով շրջանակել ու անկէ իր կնոջ համար գլխու վարդ մը պատրաստել տուաւ : Այս պիտի ըլլար պատիժը անոր յստի ընթացքին :

Մինչ այս մինչ այն, Հորոշան միայնակ անտառներուն մէջ կը թափառէր, ողորալով իր չարաբաստիկ ճակատագրին վրայ : Զմրան ճիշդ մէջտեղն էր, եւ ձիւն ու սառույց կը ծածկէին երկիրը : Բայց, ի՛նչ հրաշք, ուր որ Հորոշան կ'երթար, հոն երկրէն ծաղիկներ կը փթթէին եւ ուր որ կը նայէր ան, հոն ի բաց կը հալէր ձմրան ծածկոյթը, իրրեւ գարնան արեւուն ճառագայթներէն եւ ուր որ իր շունչը կը շնչէր, հոն ծառերը կը թօթափէին իրենց վրայի ձիւնը, ու անոնց ճիւղերը կ'ընծիւղէին ծաղիկներ ու տերեւներ, այնչա՛փ մեծ էր անոր գեղեցկութեան կենդանարար զօրութիւնը : Նոյն իսկ անտառի վայրագ անասունները կը վարանէին անոր տեսքէն ու իրենց ուրախութենէն վեր կ'ոտնուէին :

Բայց անոր սիրտը օտարացած էր խնդրութենէ. դառն զիղջ մը կը զգար իր անցեալին համար ու կը պաղատէր աստուածներուն որպէս զի իրեն մահ տան : Այսպէս կը մաշէր ան երկար ժամանակ ողորով ու հեծեծանքով, եւ անտառին ծառերէն ու կենդանիներէն զատ չունէր ուրիշ ընկերութիւն մը, իր անկողինէն էր խոնաւ գետինը, իր ծածկոյցը՝ երկնքի կապոյտ վրանը (Himmelszelt) :

Ու ան դժնէ տառապանքներու մէջ ծնաւ աղայ մը : Անոր օրօր երգեցին շնագայլեր ու անգլիւր : Բայց աղան ճիւղալ մըն էր ու իր մօրը համար՝ թախիծի մշտատեւ աղբիւր մը :

Բայց եւ այնպէս կը խնամէր՝ զայն ամենէն փափուկ հոգածութեամբ ու սիրով, որովհետեւ դժբաղդութիւնը ամէն դժնդակ զգացում՝ անկէ վտարած էր եւ ան բարեհալած ու սիրազեղ եղած էր հրեշտակի մը պէս։ Այլեւս մահուան չէր բաղձար, որովհետեւ իր տղան զինքը կեանքին կը կապէր։

Տարիներ սահեցան, անցան եւ տղան աճեցաւ ու անոր հետ աճեցաւ նաեւ իր մօր վիշտը։

Սակայն ճակատագիրը Հորոշանի դէմ արձակած չէր դեռ իր արհաւիրքի բոլոր սլաքները։ Ամէնէն դժխեմը անոր առջեւ կը գտնուէր. ան դեռ պիտի կորսնցնէր իր զաւակը, իր մէկ հատիկը՝ որ զինքը կեանքին կը կապէր։ Երկար ժամանակ հիւանդագին անկողնի ծառայելէ յետոյ մեռաւ տղան՝ ու մօրը վիշտը կը սպառնար յուսահատութեան փոխուելու։

Ան կ'ուզէր քաջութեամբ վերջ տալ իր կեանքին ու այն ինչ ինքզինքը բարձրաբերձ ժայռէ մը վար գահավիժելու գիտաւորութիւնը ունէր, երբ յեղակարծուստ իր առջեւ երեւան եկած լուսեղէն կերպարանքէ մը տարտափած՝ ետ ընկրկեցաւ։

Ու լուսեղէն կերպարանքը ըստ անոր. «Մի՛ վախնար, Հորոշան, ես սիրոյ աստուածուհին եմ, դուն պղծեցիր իմ մեհեանս ու ատոր համար քառեցիր բայց փրկութեանդ ժամը մօտ է։ Ա՛լ երկար ժամանակ երկիրը քեզի դժոխք մը չալտի դառնայ։ Անցեալին յանցանքը քեզմէ կը վերցնեմ, ինչպէս որ վերցուցի Հոսիփսիմէէն։ Իջի՛ր վար հովիտը, ասկէ վերջը դուն նոր կեանքով մը պիտի շրջիս։»

Այսպէս խօսելով աներեւութացաւ լուսեղէն կերպարանքը, ինչպէս եկած էր։

Իսկ Հորոշան իջաւ վար, հովիտը, հաստատուն քայլերով, եւ բարեառմանի որսորդ մը՝ որ իր ձեռքին վրայ բազէ մը կը կրէր, անոր գէմն ելաւ ու իր աչքերը շրջան չընաղհագի կնոջ շնորհագեղութենէն։

Ի՞նչ հարկ որ ես ձեզի երկար պատմեմ, թէ ի՞նչ պատահեցաւ, բաւական է որ երկուքը եղան այր ու կին ու վաւականերով օրհ-

նուած եւ երջանիկ ապրեցան մինչեւ իրենց խոր ծերութիւնը։

Ու նաեւ Հոսիփսիմէ՝ դեռ չատ երջանիկ օրեր տեսաւ։ Եօթը տարիներ քառեց իր մեղքերուն համար, յետոյ դարձեալ նախկին սիրովը բացաւ ամուսնոյն սիրտը, ու ան վերջուց Հոսիփսիմէի գլուխն ոսկեշջանակ գանկը ու թաղեց խորապէս երկրին մէջ եւ ըստ. «Այսպէս ալ պէտք է թաղուի մեր միջեւ եւ զամ ամէն ատեղութիւն։»

Եւ երբ երկու կիները երկար բաժանուէ մը յետոյ զիրար վերատրին տեսան, երկուքն ալ չէին կրնար ըստ բաւականին գովել իրենց երջանկութիւնը։

Բախտը բոլոր մոլախոտերէն մաքրած էր անոնց սրտին պարտեզը ու հոն թողած էր երջանկութեան ծաղիկները միայն։

FRIEDRICH BODENSTEDTS

Թարգմ. Գերմաներէնէ

Վ. ԳՈՒՅՈՒՄՃԻԱՆ

(Կարին, Սանասարեան վարժարան)

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Ազգ. Պատրիարքարանի

Ազգային ընդհանուր արոց հաւաքման գործը կանոնադրելու համար՝ որոշմամբ Եւմաթից Վարչական Յանձնաժողովոյ, քանի մը նոր հաւաքիչներ պիտի կարգուին։ Այդ պաշտօնը յանձն առնելու յօժարողը կը հրաւիրուին մինչեւ յառաջիկայ Սեպտեմբեր 15, Երեքշաբթի եւ Հինգշաբթի օրերը ներկայանալ ի Պատրիարքարան եւ Եւմաթից Իւանի Տեղէն ստանալ կարեւոր տեղեկութիւնը՝ պայմաններու մասին։

16 Օգոստ. 1901 (ԿԵԻԲ Ազգ. Պատրիարքարանի)

Նշանախօսութիւն. — Նախորդ չարթու տեղի ունեցաւ Ռօսիա ապահովագրական ընկերութեան ընդհանուր քննիչ Արտաշէս էֆ. Հիւրմուզի նշանախօսութիւնը Օր. Աշխէն Փորթուզալի հետ, դուտար հանգուցեալ Միքայէլ փաշայի։ Արտաշէս էֆ. Հիւրմուզ՝ տարիներէ ի վեր ապահովագրական գործերու մէջ ցոյց տուած ձեռնհասութեամբ եւ ուղղամտութեամբ յարգելի դիրք մը գրաւած է, եւ Օր. Փորթուզալ՝ բնիկ ու եւրոպական լեզուներով ընտիր ուսում առած։ Մեր խնդակցութիւնները՝ երկու ծանօթ ընտանիքներու միջեւ հաստատուած խնամութեանը առթիւ։

ԱՆ ՀՈԳՍ ՉԷ

Ա՛լ հոգրս չէ որ սեւ խոհեր եւ ռիսերիմ
Հեզնութիւններ կեանքիս ուղից յար փրօսեմն .
Ու , չարերէն զգուած , պիտի չի դեգերիմ
Ա՛լ սիրտերու շուրջ որ կուլան ամեն ասեմ :

Քանի որ դուն , սրտիս նախկին սուրբ մրտերիմ ,
Երբ սերն անդարձ կ'երթայ յանախ մոռցող սիրտէն ,
Դուն , վաղամեռ , որուն հոգիս եր լոկ շիրիմ ,
Թաւմ կեանքով մը կը դառնաս գիրկս սիրով նորէն :

Քանի որ , խօ՛ւ , պիտի նայիմ աչքերուդ մեջ ,
Սեւ աչքերուդ որոնց ակնարկն է սեր անեղ ,
Ա՛լ հոգրս չէ որ համբոյրներն քլան խաբող :

Թե կ'անցնի կեանքն իբրեւ հառաչ եւ իբրեւ դող ,
Երբ մթածուխ , հիւսուած սերէ եւ անուշէ ,
Ցոյայ հոգւոյդ մեջ — ո՛հ , բան մը ա՛լ հոգրս չէ :

ՎԱՅԱՆ ՄԱԼԷՋԵԱՆ

Ի ՊԵՏՍ ... ԱՐՏԱԴՐՈՂԱՅ

Քանի մը արուեստներ կան որոնց մէջ ձեւ-
ւարաններու (formulaire) գործածութիւնը
անհրաժեշտ պէտքի կարգ անցած է . Երկրա-
չափը ունի իր ձեւարանը՝ որ արուեստի գոր-
ծերու չիւնութեանց մէջ հաշիւները կը դիւ-
րացնէ . դեղագործը ունի իր ձեւարանը՝ որ
զանազան թթուներու լուծման կամ պատ-
րաստութեան եղանակը կը ցուցնէ . նոտարը
ունի իր ձեւարանը՝ որ քաղաքային կեանքի
յատուկ գործողութեանց համար հարկաւոր
թուղթերու կանոնաւորութիւնը կ'ապահովէ ,
ինչպէս կտակ , պայմանագրութիւն , եւնո-
Փաստաբանն է որ ամենէն քիչ կը դիմէ ձեւ-
ւարաններու , այդ ալ՝ քաջ փաստաբանը՝ ան-
չուշտ :

Քրականութեան եւ գեղարուեստներու մէջ
ձեւարանի գործածութիւնը չի տեսնուիր . այս
ալ հարկաւ իր պատճառը ունի՝ զոր պրպը-
տելը երկայն գործ պիտի ըլլար :

Կը մտածեմ թէ պակասութիւն մը չէ՞ այս
զոր լեցնելը անկարելի պիտի չըլլար՝ Թերեւս
եւ այս դիտաւորութեամբ կը փափաքիմ մաս-
նակից ընել հանրութիւնը անհատական փոր-
ձառութեանս արդիւնքներուն՝ զորս ձեռք ձը-
գեցի քննադատական մէկ քանի ուսումնա-
սիրութիւններուս առթիւ :

Փիլիսոփայութիւնը որ աղի հատիկին մէջ
անգամ կը մտնէ , ինչո՞ւ չի մտնէր քննա-
դատութեան մէջ , որով լաւագոյն պիտի լու-
սարանուէին գաղափարներու վիճակը , մտային
զարգացման աստիճանը , մեր հանրային եւ
ընկերական բարքերուն որպիսութիւնը , գե-
ղագիտական խնդիրներու վիճաբանութեանց
առթիւ ալ՝ իւրաքանչիւրին ըմբռնման եղա-
նակը :

Եզրակացութիւնս սա եղաւ թէ դերերը
բոլորովին տակն ու վրայ եղած են՝ կարծեա՛
արտագրութեան (ինքնաստեղծ կամ թարգմա-

նածոյ) եւ քննադատութեան միջեւ :

Ժամանակ մը՝ թերեւս դեռ հիմայ՝ արհամարհելին քննադատութիւնն էր եւ համակրութեան միակ առարկան՝ արտադրութիւնը : Քննադատը՝ յոռի դեր կատարողն էր : Քննադատութեան նպատակը բժախնդրութիւն միայն կրնար ըլլալ եւ անոր շարժառիթը՝ նիւթական շահ կամ փառասիրութիւն :

Իսկ արտադրողը՝ որքա՞ն առաքինի մարդ էր, անարատ բարքի եւ սրբութեան տիպար, հեզ եւ բարեբարոյ, համեստ՝ հակառակ իր մեծ խելքին, որուն նպատակը երբեք ստակ չահիլ չէր. համբաւ հանել մտքէն բնաւ չէր անցընել. փառասիրութիւն ըստած բանը չէր գիտեր : Գէթ այս էր այն կերպարանքը որուն տակ արտադրողը ամէն ճիգ կ'ընէր ինքզինքը ներկայացնելու համար, եւ այս առաքինութիւններովը ծանօթացնելու համար հանրութեան :

Ժամանակ մը՝ թերեւս դեռ այսօր՝ քննադատը կը նկատուէր իբր գիշատիչ թռչուն մը որ հեղինակին միտք ուտելով կը ցնանէր. իբր զազրելի էակ մը, վերջապէս իբր ուրուական մը՝ որով սոնտուները կը վախցնեն մանուկները :

Բայց թուի թէ դերերը — ինչպէս կ'ըսէի — տակն ու վրայ ըլլալու կերպարանք կ'առնեն եւ յարաբերութիւնները շրջուած կ'երեւան արտադրութեան եւ քննադատութեան միջեւ :

Յառաջդիմութեան իրական նշան մը կա՞յ այդ բանին մէջ, ապա թէ ոչ ես ինքզինքս կը խարեմ :

Շահով եւ կիրքով ներշնչուած ֆնկադաւորները ամէն ազգի, ամէն երկրի մէջ կայ. բայց քանի որ բացառութիւն է զարգացեալ ժողովուրդներու մէջ՝ թերութիւն կը նկատուի : Ուստի չարժեք երկարել այս կէտին վրայ :

Մնապարծութեամբ եւ փառամոլութեամբ ներշնչուած արտադրողները աւելի սովորական երեւոյթ է ամէն տեղ, ամէն երկրի մէջ, եւ մանաւանդ մեր հասարակութեան մէջ, կը զարմանամ ուրեմն թէ ինչո՞ւ քննադատին միայն կը վերագրուին այս մոլութիւնները, քննադատին միայն բաժինը կ'ըլլան նախանձ եւ ամբարշտաւանութիւն, նենգամտութիւն եւ

ատելութիւն. թէ ինչո՞ւ զերծ կը նկատուի արտադրողը այս ամէն կիրքերէն. թէ ինչո՞ւ այնքան կը կարեկցին արտադրողին վրայ, այնպէս՝ ինչպէս պիտի արտասուէր ջերմեռանդ կինը՝ սուրբի մը պատկերին առջեւ :

Փոքրաթի՞ւ են այն արտադրողները որոնք մեր մէջ՝ յաճախ գրական գործի մը կը նետուին անգիտակցութեամբ, կը ձեւեն ու կը կարեն առանց չափելու, կը կուրանան տենջէ մը՝ որ զիրենք անդադար կը մղէ ձեռնարկելու իրենց կարողութենէն աւելի բարձր երկասիրութիւններու :

Քիչ կը տեսնուին մեր մէջ այս կարգի արտադրողներ՝ որոնք տեսակ մը վարժութիւն ստանալով իրենց անձին եւ մտքին վրայ առօրեայ հիացմամբ մը, կ'արհամարեն ամէն օտար կարծիք, ամեն դիտողութիւն, կը համարձակին նոյնիսկ ճշմարտութիւնը ուրանալ՝ երբ իրենց մնապարծութեան շահը զայն պահանջէ :

Կը պատահի՞ ոչ նուազ յաճախ՝ որ արտադրող մը նախապէս որոշած էր հանրութեան քթին ինզալ — հանրութիւն մը որ միշտ բարի եւ խելօք ազայ է վիճաբանութեանց մէջ — եւ այսօր՝ սարսափելի կերպով կը կատարի իր անճշդութեանց հրապարակաւ հրդեհակուռն համար, եւ իր խորամանկութեան օգին մէջ ցնդած ըլլալուն համար : Միթէ ինք չէր գիտեր իր թերութիւնները, Շատ լաւ գիտէր, ամէնէն լաւ գիտէր՝ զանոնք, բայց քննադատը՝ անոր աչքին առջեւ՝ չարակամ եւ անարարոյական է, որովհետեւ չի լուց անոնց վրայ, գէթ խաթեր համար :

Այս մասնուոր բարքերուն կամ զաղափարներուն հետեւանքով ծնան սխալ, անմիտ, տխմարական սկզբունքներ որոնցմէ մին սա է թէ՛ քննադատը անպատասխանատու դեր մը կը կատարէ միշտ, քանի որ արտադրողը ամէն վիճասի ենթարկած է ինքզինքը արդէն, եւ եթէ գիտուն եւ հմուտ չըլլար՝ անշուշտ չէր ենթարկուեր այդ վիճասին : Հետեւաբար երկասիրութիւնը ամէն քննադատութեան վեր է՝ եւ քննադատը լուրջ մարդ չի կրնար ըլլալ : Մտքերու արգի այս զօրաւոր ընթացքին դէմ հակազդելու դիտաւորութեամբ է որ պիտի ջանամ ուսումնասիրել. մեր առհասարակ ար-

տաղրողներուն հոգեբանական վիճակը . թագուն զիտաւորութիւնները , բերանին բաց զմալողներուն առջեւ միշտ մեծ եւ անդադար յաջող երեւնալու համար գործադրած միջոցները , երբեմն քաշած՝ երբեմն թողած թելերը — որոնք աչքի չեն երեւար իրենց բարակութեամբը — , վերջապէս գրչամարտի մէջ իրենց յատուկ եղած զանազան հնարքները՝ յարձակման կամ նախնաձման պարագաներուն մէջ :

Արտադրողները օժտուած են այս բազմադիմի վարպետորդութիւններով , բայց՝ ամէն ատեն՝ կը ջանան ծածկել զանոնք բանաստեղծական երգներանգ ծաղիկներու փունջներու տակ , երբեմն՝ չափազանցեալ եւ կեղծուած քաղաքավարութեան մը կերպարանքին տակ , եւ երբեմն ալ՝ դժբաղդաբար — ինչ որ էն յաճախ պատահածն է — կոչաւ եւ կոպիտ բառերու ու բացատրութիւններու տեղատարաւի մը տակ , յախուռն յարձակումներով անհատական արժանապատուութեան դէմ , մեծ գիտնականի , անբաւ լեզուագէտի , աննման բանաստեղծի դիմակներու տակ , որոնք վերջապէս կը խաբեն հանրութիւնը՝ որ գոհ կ'ըլլայ կարծես խաբուելէն՝ ինչպէս պարահանդէսի մը մէջ մարդ հաճութեամբ պիտի խաբուէր իրականաւոր դերասանուհիի մը intriguesներէն :

Հոգեբանական զանազան դիտողութիւններու արդիւնքը ուշադրութեամբ վերաքննելով , համոզուեցայ թէ պատեհ առիթ է օգտակար ծառայութիւն մը ընելու մերազգի արտադրողներուն եւ մի եւ նոյն ատեն շահաւոր գործ մըն ալ կատարելու , անկասկած :

Այս տենչով՝ կը ներկայացնեմ այսօր տարրական ձեւարան մը որ պակաս մը պիտի լեցնէ եւ որ՝ վստահ եմ՝ մեծապէս պիտի դիւրացնէ արտադրողներուն գործը , ամէն անգամ որ ասոնք՝ միամտութեամբ ձեռնարկութեան մը սկսած ատենին՝ յանկարծ կը պատահին ամէնէն աւելի իրենց ահ ու սարսափ ազդող ձեւազ քննադատին :

Տարրական այս ձեւարանս կը հրատարակեմ — ինչպէս ըսած է մէկը — « իբր փորձ , եւ գրգիռ ըլլալու համար աւելի յաջող գրիչներու » :

Եւ որպէս զի անոր գործածութիւնը դիւրին ըլլայ՝ նման ուրիշ արուեստներու յատուկ ձեւարաններուն՝ օգտակար կը սեպեմ ցուցնել անոր կիրառութեան եղանակը իւրաքանչիւր պարագայի մէջ :

Օրինակի համար , եթէ քննադատին ամէն դիտողութիւնները օրինաւոր եւ ճշմարիտ են , պէտք է հերքել զանոնք ամէնքն ալ , ի բաց առեալ մէկ հասը , որպէս զի արտադրողին անկեղծութիւնը չի վտանգուի : Ուստի հետեւեալ ձեւերէն մէկը կամ միւսը յանձնարարելի են այս պարագային .

— « Թէպէտեւ դիտողութեանց ամենամեծ մասը՝ խիստ աննշան բացատրութեամբ՝ ապիկար քաղքչութիւններ են , բայց ժամանակ է անկեղծօրէն խոստովանիլ թէ մեր մէկ վրէպը . . . : Բայց ասով առիթ տուած կ'ըլլանք մեր քննադատին իր խոչոր եւ բազմադիմի սխալները խոստովանելու : »

— « Կը բաւէր միայն ցուցնել գործած սխալներս՝ եթէ իրօք կային , եւ ընել սրբագրութիւնները . երանի՜ թէ ասոնք ուղիղ ըլլային : Թողով քանի մը անճշգրտութիւնները , միակ սխալը զոր գործած եմ անուշադրութեամբ . . . »

Ստոյգ է որ լրբութեան dose-ը էն զօրաւորն է առաջին ձեւին մէջ՝ բայց հոգ չէ , ազդու ձեւ է :

Համանման պարագայի մը մէջ , արտադրողը մեծ յաջողութեամբ կրնայ ծածկել իր սխալները եթէ ըսէ .

— « Ձեր առած ամէն քայլին՝ այնպիսի խոչոր սխալներ կ'ընէք որ դուք ինքնին կը հասկցնէք ձեր կարողութեան չափը » :

— « Ձիս սրբագրելու ելլողը՝ սխալէ սխալ կը գլորի . շատ անձնուրաց մէկը ըլլալու է ինքզինքը այսպէս ծաղր ու ծանակ կացուցանելու համար աշխարհի առջեւ : Սխալներու մէջ թաւալգլոր կը խաղայ : »

Նոյն պարագային՝ ոչ նուազ ազդու են նաեւ հետեւեալ ձեւերը .

— « Բարեբաղդաբար մէջտեղ կը կենան ձեր սրբագրութիւնները եւ մենք կը շատանանք զանոնք սրբագրելով , զի առատ հունձք կայ հոն : »

— « Քննադատութեան ասպարէզին մէջ

իջնալով, իր սխալները իբրեւ սրբազրութիւն մէջ կը բերէ, զոր պիտի չընէր՝ եթէ Բագրատունին կարգացած ըլլար։»

Եթէ քննադատուած արտադրութիւնը թարգմանութիւն մըն է եւ ոտանաւոր, հեղինակը անբաւ կը մեծնայ հանրութեան աչքին եթէ չի վարանի գրելու։

— «Իր ողորմելի դիտողութիւնները ֆըրանսագիտութեան ինչպէս եւ հայերէնի անբաւական պաշար կը յայտնեն։ Զրսէ՞ք թէ ձեր հայերէնն ալ չգիտէք։»

— «Զուգեցի հրապարակել հայերէնի մէջ ունեցած տկարութիւնը։»

— «Մեր պարսաւագէտը յաւիտեան բան չպիտի հասկընայ ոտանաւորէն։ Գաղղիներէնը պոչէն կը հասկընայ։ Ի՞նչ աններելի մեղք գործեր ենք մեր կեանքին մէջ՝ որ այսպիսի իմաստուն բանադատ մը կ'իլլէ մեր դիմաց։»

— «Կը փափաքէի գաղղիներէնի, հայերէնի եւ տաղաչափութեան հմուտ եւ առողջ միտքերու հանդիպել։»

Երբ ոտանաւոր գրող էք եւ կ'ուզէք որ Հայոց Հոմերոսը անուանուիք (պարագան շատ փափուկ է, բայց դժուարութիւնը անյաղթելի չէ) բաւ է որ համեմատութենէն չի հեռանաք եւ թողուք որ ընթերցողները կռահեն ձեր դիտաւորութիւնը։ Այս նպատակին համար՝ մէկ բառ միայն բաւական է։ Անուանեցէ՛ք ձեր քննադատը սապէս։

— «Պ. ԶՕԻԼԸ,» — Եւ ամէն բան ըսած կ'ըլլաք։ Եթէ չի գնէիք Պարոն մակդիրը՝ ճշգրտոյն կ'ըլլար։

Բացատրութեան համար պիտի աւելցնեմ թէ Զօիլ՝ նախանձոտ քննադատը եղաւ Հոմէրոսի եւ ծագրելի կերպով անուանի ըրաւ ինքզինքը իր անարդար քննադատութեամբը։

Վերոյիշեալ ձեւերը պարզապէս կը պատահան գրչամարտին կռուանը եւ հանրութեան միտքը։ Ասոնց ազդեցութիւնը մեծ է ընթերցողին վրայ, բայց վճռական յաղթութիւնը չեն ապահովեր։ Ուստի ջախջախիչ հարուածը հետեւեալ ձեւերուն վերապահուած է։

— «Դուք բան արտադրելու անկարող ուրիշներուն գործը քաշքշելու կ'ըլլաք։ Քննադատելը դիւրին է եւ խճճելը անհունապէս

աւելի դիւրին։ Դժուար գործը արտադրելն է, դուք անպատասխանատու դեր մը կը կատարէք։ Թարգմանութեան արուեստը փակ դուռ մըն է ձեզի համար։»

— «Արուեստը դժուարին է՝ քննադատութիւնը հեշտ։ քաջութիւնը հոն է որ երբ մէկը ուրիշին գործը կը քննադատէ, առնէ գրիչը ձեռքը եւ թարգմանէ ու «բանաստեղծ չեմ» ըսելով չանցնի չերթայ։»

Բայց ինչ որ ըսեմ, բարեկամ, անօգուտ է։ Մարդ գործի մէջ գտնուելու է որ գիտնայ թէ արտադրող մը կարծէ թէ այսքանը բաւական է, չա՛տ պիտի սխալի։ Այխարհիս մէջ ոչ մէկ փաստ, ոչ մէկ ապացոյց, ոչ մէկ առարկութիւն ինքնին զօրութիւն չունենար, եթէ ասոնց չընկերանար հայհոյանքը եւ անհատականութեան, արժանապատուութեան, պատուոյ դէմ անդուսպ յարձակումը։ Քննադատին պատուարները ա՛յն ատեն տապալած կ'ըլլաս, երբ առանց խղճի, առանց փափկանկատութեան կ'աւելցնես։ — «Կարգ մը բարոյական թերութիւններ կը նշմարեմ մեր պարսաւագէտին գրուածքին մէջ, իսկ անարդար եւ չարակամ ըլլալուն քուէս կուտամ լի ու լի համոզմամբ։ Ուղիղ խելքի ու տրամաբանութեան (թո՛ղ ուրիշ գրական եւ բարոյական թերութիւններու) նշոյն անգամ չկայ ձեր տխրայիշատակ գործին մէջ։

— «Ո՛վ ուղղամտութիւն, ի՞նչ անկեղծութիւն (ինչ անական տանք՝ չուշանափա՛յլ)։ Անշահախնդրութիւն։ Բան մը որուն ծածկոյթ քօղը պատռած է։ Այսպիսի քննադատութիւն մը կը վատթարացնէ հասարակութեան ճաշակը։»

— «Սխալ հասկացողը դուք էք միշտ, ձեր անձեռնհասութիւնն է։ չարակամութիւն չի բաւեր միայն յոռի նպատակի մը հասնելու համար։ Կարողութիւն ալ պէտք է՝ զոր չունիք։ Յայտնի կ'երեւի ձեր խակութիւնը եւ ըմբռնման տկարութիւնը։»

Ասկէ վերջը ալ մի՛ կասկածիք։ Հանրութեան մեծամասնութիւնը ձեզի հետ է, մանաւանդ անուս եւ տգէտ մասը որ իր գաղափարը «անանկ կ'ըսէին կոր»ով կազմած է, եւ բազդատելու եւ ուսումնասիրելու ժամանակ կամ տրամադրութիւն չունի։ Ասոնք

արդէն ծափահարելու պատրաստ են , արդէն բաւական տրամադիր են , եւ երեքտրական կայծը անմիջապէս պիտի փայլի եթէ հաստատուի ձեր անսխալականութիւնը սա կորովի չեղտերով :

— « Անհուն գոհունակութեան առիթ մըն է տեսնել եւ հաստատել թէ մեր հակառակորդին բժախնդիր ճիգերը ծառայած են միայն . . . մեր թարգմանութեան հարազատութիւնը ապացուցանելու . ինչ որ պզտի արդիւնք մը չէ մեզ համար : »

Վերջին խրատ մըն ալ, աւարտելէ առաջ , Պէտք չէ մոռնալ թէ հանրութեան մէջ ուսեալ , հմուտ եւ բանիմաց փոքրամասնութիւն մըն ալ կայ՝ զոր կարելի չէ արհամարհել , Մարդ որքան սուտ խօսի , ամէն սուտ չի կրնար կլլեցնել գիտունին : Ուստի՝ այս վերջիններուն դիտաւորութեանը համար՝ անհրաժեշտ է գործածել հետեւեալ ձեւերէն մէկը կամ միւսը՝ որոնց երկուքն ալ համարժէք են .

— «Արդէն սխալիլը մարդկային է . թող ինքզինքը անսխալ կարծող յանձնապատասանը նետէ առաջին քարը : »

— «Մենք մահկանացուքս սխալական ենք : Սխալիլը ամօթ չէ , սխալը չճանչնալն է ամօթ : Քաջութիւնը քիչ սխալելուն մէջն է : Հոմէրոսներն ալ կը քնանան երբեմն . »

Այսպէս գրէ՝, առաքինի արտադրող , այսպէս խօսէ՝, բայց չըլլայ որ սխալներդ խոտովանիս . ո՛հ , մեծ ամօթ պիտի ըլլար :

Միջոց մը գե՛ռ . . . վերջինը . . . :

Երբ սխալներդ բազմաթիւ են , եւ քննադատը օձիքդ չի թողուր եւ կը զգաս ջղային գրգռման մը երեւոյթները , անուղղակի առաջարկութիւն կրնաս ընել վիճաբանութիւնը փակել տալու : Բայց մեծ զգուշացումով ինչպէս քննադատը կէտ է այս . խրատի ձեւը լաւագոյնն է . — Համեստ եղէք , ի սէր Աստուծոյ , գիտութեան պաշար ժողկեցէ՛ք . եւ մանաւանդ թողուցե՛ք այս ձախող պայմարը (կը տեսնէ՛ք ինչպէս խօսքը տեղը կը դրուի) զոր այնքան անխոհեմ կերպով յարուցիք : Դուք կարող չէք իմ գործս գնահատելու , զայս լաւ գիտցէ՛ք :

Ասոր վրայ՝ կը սպասեմ որ ձեւարանս ծախուի — որուն վրայ կուսկած չունիմ — եւ զրպանները լեցնեմ . . . :

18 Օգոստոս 1901

Գ. ՄԱԼԽԱՍ

ԳԵՂԵՑԿԻՆ ՀԱՆԴԵՊ

(Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր)

ՄԵՐՍԵՏԵՍԻՆ

Մասիսի մէջ «Գեղեցկին հանգէպ» գրած նիդ ինծի կը յիշեցնէ պատմութիւն մը , չա՛տ մօտիկ անցեալի մը պատմութիւն , որուն կրկներեւոյթը կրնայ համարուիլ ձերինը :

Ան առեմը՝ կրթական երկու ընկերութիւններ ունէինք Պոլսոյ մէջ , երկուքն ալ կրնարու ընկերութիւն : Աստուք , իրենց գառնձը ճոխացնելու համար , սովորաբար տարին անգամ մը պարահանգէսի տոմսակ ցրուելու կ'ըլլէին : Փորձը իրենց սովորեցուցած էր որ յաջողութիւնը աւելի դիւրաւ ձեռք կը բերուէր երբ , տոմսակները ցրուելու համար , գեղուհիներ յաճառու ըլլային գործին : Վերջերը , ա՛լ այնչափ հասկնալի եղաւ որ , երբ տոմսակներու օրերը գային , բերնուց սովորուած դասի մը պէս կը դիտուէր թէ որո՞նք էին որ , մեր վաճառատուններու անհիւրընկալ ծածքին տակ , գեղեցկութեան անդիմադրելի հմայքով , քսակներն ու ժանգոտ դրամարկները դող պիտի հանէին : Ազկէ մէջտեղը ելան anecdoteներ , անշուշտ հիմա տարուած մեծ յատամբ . ես հազիւ անոնցմէ հատ մը պահած եմ իմ մտքիս մէջ :

Վաճառականին մէկը , այցելուհիներու ժամուն , դիպուածով գտնուած կ'ըլլայ իր մէկ դրացիին միտերանոցը : Տոմսակները դուրս ելլելու տոտնը , ձեռքը գրպանը կը տանի , բայց խորհելով որ երկու բոպէ կրնայ աւելի վայելել գեղեցկութեան ներկայութիւնը , իր վաճառատունը կը գառնայ , ու մէկի տեղ երկու ոսկի կուտայ ձեր նշանակած եղանակովը :

Մանրագէպը , բաւական գոյթակղեցուցիչ իր ժամանակին առիթ տուաւ դատափետելու այդ մարդը որ անխռով պատասխանած էր իր՝ մէկ բարեկամին թէ ինքը անջատ էութիւն մը կ'ըմբռնէ գեղեցկութիւնը կին տանդ՝ ծուած ին վրայ , ու միշտ այդպէս վարուիլ սո-

վորութիւն ըրած էր իրեն . մէկ ոսկին այցելու տիկնոջ ձեռքով բարեգործութեան գանձը իջած էր , միւս ոսկին . . . գեղեցկութեան ձեռքով : Որով , յաւիտեան կը մերժէր որ եւ իցէ դատաւիտութեան դոյզն նշմարանք իր այդ վարմանքին մէջ , Ու մարդը խորհիլ տուաւ թէ իր մաշած կտրձքին եւ պառուած թոքերուն մէջ , գեղեցկութեան առջեւ ճշմարիտ զգացումի այդ գեղանքը , նրբացուցիչ տարր մըն էր կամ յատկութիւն մը իր մէջը :

Ճիշդ այդ մարդուն պէս կ'ուզեմ ըմբռնել ձեր գեղեցկատէր կղզեցիին հոգին , որ մէկ քառորդ տուած էր բարեգործութեան՝ տգեղ մարապետին ձեռքովը , եւ կրկնապատիւը կուտայ գեղանիին ձեռքովը , վերջին պարագային մէջ պատիւ մը ընելով գեղեցկութեան որ , ձեր գրած պատմութեանը մէջ լոկ ծիա ծանի երանգներուն պէս փախտատական ոգիի մը մօտաւորութիւնը ունենալով , անբարոյականութեան ո՛չ մէկ տեսակէտ մը կը վերցնէ :

Այդ րոպէական գործին մէջ կրուածը լոկ ազդեցութիւն մըն է որ , հմայքի մը տակ , կը պակսեցնէ դրամին դրական արժէքը ու հողեղէն ստեղծուածը վեր կը բարձրացնէ : Ու փոքրիկ գեղծում մը ընելով , կարելի է դիտել թէ զգացումի այդ գեղանքը , լոկ կրաւորական զգայնութիւն , առաքինութեան ապացոյց մը չընծայեր , բայց հաւատալիք մըն է թէ ենթական զուրկ չէ աղւուր կիրքերէ :

Բերա —

ՓԱՅԼԱԾՈՒ

Մէրոնտէսին մէջտեղ նետած չարածճի հարցումին կուգամ պատասխանել ոչ նուազ չարածճիօրէն : Երտակը , այս տաքերուն , լուրջ բաներ գրելն ու կարդալը անտանելի է : Թուրքերէն առած մը գիտեմ , գեղեցիկ կիներուն եւ աղւուրիկ աղջիկներուն համար չինուած : Այդ առածը շատ անկեղծ կերպով կը լացատրէ իմ կարծիքս Մէրոնտէսի «ինչո՞ւ»ներու մասին : Ահաւաստիկ անոր հայերէնի որ իմ պատասխանս ալ է .

Բազմութեան մէջ քննամի ենք մեկ մեկու ,

Իսկ երբ միմակ՝ դուն իմ կեանքս ես՝ ես ալ քու :

Բ. Հիսար

Ն. ԶԱՎՈՒՆԵԱՆ

Մարդս միշտ ճիգ մը ունի , մարմնով մը՝ աւելի ճիշդ ըսելու համար , միեւնոյն պարագայով , միեւնոյն առթիւ եւ միեւնոյն միջոցով , միեւնոյն ժամանակին մէջ , եթէ կարելի է , փոխանակ մէկի , երկու կամ աւելի գործեր միասին տեսնելու : Ասիկայ կրնայ մարդուն իր կեանքին վրայ ունեցած սիրոյն կամ ապրելու համար իրեն տրուած ժամանակին կարճութեանը գիտակից ըլլալուն վերագրուիլ . բայց ի՞նչ փոյթ , բաւական է որ անիկայ մարդուն բնութեան կապուած իրողութիւն մըն է բացայայտ , ու առօրեայ ամենապարզ դէպքերու դիտողութեամբն իսկ հաստատուի :

Այս ընդունուելէն վերջ , լուծուած կը տեսնեմ ես Մէրոնտէսի առաջարկը եւ չա՛տ իրաւացի եւ ուղիւղը գտնեմ , ու գերազանցապէս մարդկային մանաւանդ , որ այր մը՝ գեղեցիկ մարապետի մը ներկայանալուն՝ աւելի վճարէ անոր քան տգեղի մը , հոգ չէ թէ երկուքն ալ նոյն նպատակը ունենան . վասն զի հոս , անիկայ , նուիրատու այրը , իր ներքինին , իր բնութեան բերումին համեմատ իսկ , բարեգործութիւն մը ըրած ըլլալուն առթիւ իր վայելած հաճոյքին , Գեղեցիկը վայելած ըլլալու եւ մանաւանդ անոր համակրելի երեւցած ըլլալու ամենարեւական հաճոյքներն ալ միացուցած կ'ըլլայ :

Բ. Ն. ՇԱՀՊԱՋ

Ի՞նչ մեղքս պահեմ , աղւուր մարապետ մը տեսած չեմ տակաւին , սակայն եթէ տեսնելու ըլլամ օր մը , ու ինչ երբ quêteի համար ստակ ուզէ կամ մուրայ , երկու քառորդ չէ , չորս անգամ երկու քառորդ կուտամ , քանի որ ամէն պարագայի մէջ ինծի համար գեղեցկին հանդէպ զգացած հաճոյքիս չափ աղւուր հաճոյք մըն ալ . . . նուէր տալն է : Անբարոյականութիւն , հէ՞ , կ'ատեմ ես m-aritorneբը : Այսչափ , Ասիկա ենթադրութիւն մըն էր առաջ , բայց Մէրոնտէսի պէտք եղածէն աւելի հետաքրքրական պատմութիւնը կարդալէս անմիջապէս վերջը համուզումի փոխուեցաւ : Ճիշտ զրուցեցէք , երբ Քոյր էմիլիէն հոգի առնէ ու գոյ ձենէ ստակ ուզէ կամ մուրայ , քանի՞ քառորդ կուտաք :

ՄԵԼԸ

ՅՈՒՇԱՏԵՏԻՐ

Վեհ. Սուլթանի Գահակալութեան Տարեդարձին առթիւ, կիրակի առաւ, Մայր Եկեղեցւոյ մէջ կատարուած գոհարանական հանդիսաւոր մաղթանքներէն ետքը, Ս. Պատրիարք Հայրը իր հետ ունենալով Ա. Գործակաւար Տէր Ներսէսեան Տիգրան էֆ. ուղղակի Կայս. Պալատ գնաց, Հայ Ազգին հաւատարմական զգացումները մատուցանելու յոռո Կայս. Գահայից։ Ն. Սրբազնութիւնը՝ Յունաց եւ Հայ Հռոմէականաց Պատրիարքին ինչպէս նաեւ միւս հոգեւոր պետերուն հետ, արարողապետ Իպրահիմ պէյի միջոցաւ պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայութեան ընդունուելու եւ արժանացաւ Կայսերական մեծարանաց։ Յունաց Ս. Պատրիարքն ի գլխաց հոգեւոր պետերուն, բարեմաղթութիւններ ըրաւ Վեհ. Սուլթանին բարօրութեանն ու արեւշատութեանը համար։ Ն. Կ. Վեհափառութիւն հաճեցաւ իր բարձր գոհունակութիւնն յայտնել եղած հաւատարմական նորոտայայտութեանց եւ բարեմաղթութեանց համար, եւ հրամայեց իր Կայսերական բարեւներն հաղորդել իր ամէնազգի հաւատարիմ հպատակներուն։ Յետոյ ներկայ հոգեւոր պետերը մատուցին իրենց գրաւոր ուղերձները։

— Տ. Բարթողիմէոս արքեպիսկ. Չամչեան, Տ. Մեսրոպ արքեպիս. Սուքիասեան եւ Տ. Հմայեակ Եպիսկ. Դիմաքսեան կիրակի օրը Կայս. Պալատ երթալով, բարեմաղթական ուղերձներ մատուցին Կայսերական Գահակալութեան տարեդարձին առթիւ։

Խառն ժողովի չորեքշաբթի օրուան նիստին, որ դումարուեցաւ նախագահութեամբ Ս. Պատրիարքին, որոշումներն են. — Ազգ. Վարչութեան կրկին ժողովոց պաշտօնավարութեան մասին Դատական նախարարութեանէն հասած թէպէտէն կարգացուեցաւ, եւ այդ մասին կարեւոր տնօրինութիւնն ընել յաջորդ նիստին թողուեցաւ։ — Մուշէն եւ շրջակայ գաւառակներէն հասած գրութիւններն ու հեռագրերը նկատողութեան առ-

նուելով, Ս. Նախագահին յանձնուեցաւ հարկ եղած տնօրինութիւններն ընել։ — Տ. Յակոբ Աշոտ Եպիսկ. Ճանիկի առաջնորդութեան ընտրութեան օրինաւորութիւնը ստուգուելով հաստատուեցաւ։ — Տիարպէքիւրի Առաջն. տեղապահ Եզեկիէլ Վ. ընդարձակ տեղեկագիր մը մատուցած էր ժողովին, տեղւոյն վիճակային գործոց մասին։ Ժողովը գոհունակութիւն յայտնեց Եզեկիէլ վարդապետի բարեք պաշտօնավարութեան համար, եւ որոշեց հրահանգ տալ առաջն. ընտրութեան։ Այնթապի Առաջնորդարանի գործոց մասին եկած գրութիւնները, ժողովոյ անդամներէն Չոյեան էլիաս էֆ. յանձնուեցան ուսումնասիրելու եւ կարեւորը առաջարկելու համար։ — Խարբերդի Նախորդ Առաջնորդ Պետրոս Վ. իր անցեալ պաշտօնավարութեան մասին գիր մը ուղղած ըլլալով, ժողովը կարգաց եւ վերահասու եղաւ պարունակութեանը։ — Հայ. Եկեղեցւոյ ծոցը դիմող Բաղէշցի Ասորիներու մասին եկած գրերը ժողովը նկատողութեան առաւ, եւ որոշեց հարկ եղած հրահանգը տալ Բաղէշի առաջնորդարանին։ — Ամբրսիոս Վ. Ռուբինեանի հաշուական խնդրոյն մասին Ս. Պատրիարքը տեղեկագիր մը ներկայացուց ժողովին, որուն եզրակացութիւնը եւ Ս. Պատրիարքին կարգադրութիւնը ժողովէն ընդունուեցաւ գոհունակութեամբ։ — Ազգ. Վարչութեան կողմէ իր անդամակիցներէն Ասատեան Մկրտիչ էֆ. յանձնարարուած դատերու նկատմամբ եղած հրատարակութիւն մը ժողովը սխալ տեղեկութեան արդիւնք նկատեց. եւ գոհունակութիւն յայտնեց Ասատեան էֆ. այն ջանից համար, զորս ի գործ դրած է անձնուրաւ բար, մինչեւ ցարդ իրեն յանձնուած դատերու պաշտպանութեանը մասին. որոշուեցաւ միանգամայն զրաւորապէս հաղորդել Ասատեան էֆ. Վարչութեան գոհունակութիւնը։

Ս. Պատրիարքը վաղը Մայր-Եկեղեցւոյ մէջ վարդապետական Մայրագունութեան աստիճան պիտի տայ Պալզէտէրի եւ Պանտրմայի առաջնորդական Տեղապահ Տ. Թաթուլ Վ. Դուրեանի ինչպէս նաեւ Տիարպէքիւրի Տեղապահ Տ. Եզեկիէլ Վրդ. եւ Երզնկայի առաջնորդ Տ. Դանիէլ Վրդ.։

Մխիթար Աբբահոր 200ամեայ յորեղեանին մասնակցելու համար — որ կը տօնուի վաղը կիրակի : Ս. Հաղարու մենաստանին մէջ . — Հոնտոնի եւ Բարիգի հայ գաղթականութեանց կողմէ Վենետիկ գացած է Սուքիաս Վրդ . Պարոնեան , իսկ Մանչէսթրիի հայ գաղթականութեան կողմէ՝ Թորոս քահանայ Զուլայեցի : Այս վերջին գաղթականութիւնը 50 տեղ . սկի նուիրեր է Մխիթար Աբբահոր մահարձանին համար : Ս. Հայրապետին կողմէ՝ Մխիթարեանց Յորեղեանի հանգէսին ներկայ պիտի գտնուի Եւրոպայի Հայոց առաջնորդ Տ. Գէորգ եպիսկ. Իւթիւճեան :

Վենետիկի Ռաֆայէլեան Վարժարանի նախկին աշակերտներուն փափաքանօք , Հայ Հոռութեանաց Ս. Պատրիարքը վաղն առաւօտ Պատարագ պիտի մատուցանէ Բերայի Ս. Յովհան Ոսկերեան եկեղեցին՝ ի յիշատակ Մխիթար Աբբահոր :

Քղիի Քաւառ. Ժողովէն Աղգ. Պատրիարքարան հասած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Տաճատ Վ. Ոսկանեան՝ Վիճակին առաջնորդ ընտրուած է :

Քաւ. Որբանոցներու սեպտեմբերի եւ հոկտեմբերի ամսականները սկսան զրկուիլ Աղգ Պատրիարքարանէն :

Յրուսաղիմէն կը հաղորդեն թէ ըստարապետ Տ. Սահակ եպիսկ. Սապայեան վերջնապէս հրաժարած ըլլալով Ժառանգաւորաց Վարժարանի տեսչութենէն , առաջագրեալ ուղեւորութեանը պատճառով , այդ կրթական պաշտօնին համար տրամադրելի ձեռնհաս ընտրելիներն են Տ. Մամբրէ եպիսկ. եւ կամ Տ. Եղիշէ Վրդ. Զիլիկիրեան :

Յրանսերեկնի ուսուցչաց եւ առհասարակ մեր բոլոր դաստիարակաց ջերմապէս կը յանձ. նարարենք ուսումնասիրել ծանօթ մանկավարժ Յ. Թ. Հինգլեան էֆ. Նոր զատագիրք քրանսերեկն յեզուի անուն գործին նոր տպագրութիւնը , նորաձոյլ յօրինուած՝ ըստ պահանջմանց méthode directeի , որ տիեզերական համբաւ ու վարկ կը վայելէ այսօր՝ օտար լեզուաց ուսուցման համար : Ծառաջարանին մէջ մանրամասնօրէն բացատրուած են արդիւնաւորութիւնն եւ գործածութեան եղանակն այս նոր մեթոտին , որ սկիզբէն իսկ օտար լեզուն կ'ուսուցանէ օտար լեզուաւ : 248 երեսներէ բաղկացած պատկերազարդ սիրուն հատոր մըն է , Մատթէոսեան տպարանէն լոյս ընծայուած :

Դ. ՆԱՐ-ՊԷՅ

Ն Ո Ր Բ Ա Ռ Գ Ի Ր Ք

Պատկերազարդ

Մ Ր Ա Ն Ս Ա Հ Ա Յ

Հասոյ Առաջին

A. H,

ԲԱՐԻՁ, Տպ. 1900 էջ 1—900

Այս բառարանը կը գերազանցէ մինչեւ հիմայ հրատարակուած բոլոր Քաղ-Հայերէն բառգիրքերը՝ ընդարձակութեամբ , պարունակութեամբ , պէտպիսութեամբն ու մանաւանդ ճիշտ պատկերներով , որոնք բոլորովին նորութիւն մըն են մեզ համար : Քաղղիերէն լեզուին ամբողջ բառերը , նորութիւնները , սճերն ու դարձուածքները մանրամասնօրէն դասաւորուած են , իրենց դիմաց ունենալով հայերէն ընտիր եւ դիւրահասկնալի նշանակութիւններ : Պատկերները մանաւանդ կատարելապէս կը բացատրեն իրերն ու առարկաները , զորս գուցէ դժուարութիւն քաշէր ընթերցողը հասկնալու առանց անոնց , Գրական , գիտական , ճարտարագիտական , արուեստական , բժշկական եւ այլ ամէն նոր ու հին բառեր կը պարունակէ այս հոյակապ Բառգիրքը՝ որուն բազմազանութիւն հեղինակին անունը անժխտելի գրաւական մըն է արդէն գործին կատարելութեան :

Բ. հատորը , որ վերջինն է , պիտի հրատարակուի ի մօտոյ :

Գին Ա. հատորին 25 ֆրանք

» Բ. » — 25 »


Կեդրոնատեղին է Հալաթիա , Սեդաս խան , Բիւզանդեան Գրատուն :

Քաղղ. լեզուին խորապէս հմտանալ փափաքող եւ մատենադարան ունեցող ամէն անհատ արժան է որ այս հարուստ Բառարանէն հատ մը ունենայ :

Արտօնատէր Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Ցալագրութիւն Ե. ՄԱՏԹԻՈՍԵԱՆ

Կ. Պոլիս, Յինճանճըլար եօղուշու, Թիւ 27



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՝

Ս Ի Ն Կ Է Ր

Ձեռքի, ոտքի եւ ձեռքի ուղեօգտ
միանգամայն մեքենաներ
կը գտնուին:

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամենէն աւելի կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բովանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինկերի մեքենաները կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին միմիայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

Բերս, Մեծ Ժողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դիմաց.

ԿԱԼԱԹԱ } 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը.
2. Գարաքէօյ, Թրամվէյին կայարանին Դիմաց.

ՊՈԼԻՍ } 1. Սուլթան Համամ.
2. Սուլթան Պէյազիտ.

Դասերը եւ նորոգութիւնք ձրի.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաճիւղեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ

ՇԱՐԼԹԱՎԱՆ
ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ



ՌՕՍԻԱ — ROSSIA



ԱՊՍՆՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՀ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱՄՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագիւններ

34,775,642 Փրանք

երաշխաւորութեան գումար

121,765,333 »

1881էն ի վեր ապահովագրեալներուն վճարուած

164,172,000 »

Կեդրոնացեղի, Ղալաթիոյ քաղաքին վրայ, Մաքսաւան հին տեղը

Ընդհ. Բնակիչ

Ընդհ. Գործակալ

Ա. ՀԻՐՄԻՒԶ

ԲԷՆՅՈՐ ՌԷԲԷՆ

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

ՏՈՔԹ. Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԱ, ՄԵԾ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 200

Կալաթա-Սերայի Լիսին դեմ

Ամեն օր ժամը 5—11 (Ը. Թ.)

Կիրակի օրերը ժամադրութեամբ

ՏՈՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ, ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ, ԹԻԻ 10

Բացի սովորական ներքին հիւանդութիւններէ՝ կը զարմանէ մասնաւորաբար, նոր մեթոտներով եւ խնամով ստանֆսի, աղետաց, միզական ճամբաներու հիւանդութիւնները, ջղային սխառութիւնները, զաղիական ախտերը (սիֆիլիս եւլի) եւ մորթի հիւանդութիւնները:

Հիւանդ կ'ընդունի ամէն օր կէս օրէ վերջը:

ԻԻՆԻՕՆ

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՅ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Մինչեւ 1899ի վերջը հատուցեալ վեաք	240,000,000 Ֆր.
1899ին գանձուած ապահովագին	19,500,000 »
Գրամագլուխ եւ պահեստ	105,000,000 »
Ապահովագրեալ դրամագլուխ	18,000,000,000 »

ԿԵՆԱՅ ՃԻԻՂ

Մինչեւ 1889ի վերջը հատուցեալ վեաք	99,000,000 Ֆր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	253,000,000 »
Դրամագլուխ եւ պահեստք	150,000,000 »

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Իւնիօն»ի ապահովագրելոց կ'ընծայէ հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ՓՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՉ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐԵՒԷ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց զեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան պայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիօնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կ'ենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դուրսեամբ զօրժող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամատունն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելքի Տնօրէնութիւն

Կ. Պոլիս, Կալաթա, Թահսապուրուն խան, Օսմ. Պանֆայիս դիմացը

Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ